ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2022 թվականի N 1605-Լ

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Լ որոշման N 2 հավելվածի 7-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել հողային բարեփոխումների փորձնական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քսանօրյա ժամկետում ընդունել որոշման 1-ին կետով հաստատվող ծրագրից բխող իրավական ակտերը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քսանօրյա ժամկետում ապահովել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև ծրագրից բխող անհրաժեշտ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական

բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

4) սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ.

5) սույն որոշման գործողության ավարտից հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություններ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի շրջանակներում ձեռք բերված, սակայն չվաճառված հողերի հետագա տնօրինման և տիրապետման վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում ազգային գեոպորտալում ապահովել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հասանելիությունը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում ազգային գեոպորտալում ապահովել որոշման 1-ին կետով հաստատվող ծրագրից բխող գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

13.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ